# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ Ս. ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ.Ի ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ԵՎ ՎԵՀԱՓԱՌԻ ԱՆՈՒՆՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շնորհավորում ենք աստվածային մեծ տոնը՝ լույս, սիրո և խաղաղության Փրկչի՝ Հիսուս մանկան ծնունդը: Մաղթենք նորածին Հիսուս մանկան, որ նա լուսավորե մարդու միտքը աստվածային ճշմարիտ լույսով, կենդանացնե և զորացնե մարդու սրտում սիրո և եղբայրության զգացմունքը և ներշնչե նորան հիսուսավանդ խաղաղությունը, որպեսզի լույս, սիրո և խաղաղության աստվածապարգև վսեմ գաղափարներով առաջնորդվի աշխարհը և ողջ մարդկությունը վայելե իր ստեղծած նյութական և հոգեկան բարիքները և երջանիկ ապրի: Այս է ըստ ավետարանի քրիստոնեական կրոնի հիմնական գաղափարը:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ինչպես երբեմնի Բեթղեհեմի հովիվները, ըստ երկնային հանդիսավոր ավետման, շտապեցին դեպի Բեթղեհեմ ու զմայլված և ուրախացած, խմբովին երկրպագեցին աշխարհի Փրկչին, նույնպես և մենք՝ բանավոր հոտի հեզ ու խոնարհ հովիվներս, եկեղեցու հանդիսավոր ու բարի ավետիքով, ամեն տեղերից մտքով դեպի Բեթղեհեմ ենք սլանում և, զմայլված հրաշքով և ուրախացած աստվածային շնորհի համար, և միաբան հավատով ու համերաշխ սիրով երկրպագում ենք քերովբեների վրա բազմողին, մսուրում հանգչողին:

Սույն բարիքի մի մասը ձեռք եմ բերում՝ հաղորդակցության մեջ մտնելով Ձերդ Սրբության հետ:

Իր ծննդյամբ նորոգելով ժամանակներն ու մարդկանց կյանքը, թո՛ղ նա նորոգի Ձեր հոգևոր ու մարմնավոր ուժերը, և թո՛ղ պարգևի Ձեզ իր օգնությունը Ձեր աշխատանքներում՝ ի բարօրություն Սուրբ Եկեղեցու:

Հիշեցեք Ձեր աղոթքներում և ինձ՝ նվաստիս:

Ձերդ Վեհափառությանը նվիրված ի Քրիստոս՝

ԱԼԵՔՍԻ
ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ

ԹԲԻԼԻՍԻՑ

Կատարելով հանեյի պարտականություն՝ եկեղեցիների միջև փոխադարձ հաղորդակցություն պահպանելու վերաբերյալ, սիրով շնորհավորում եմ Ձեզ, Ձերդ Ս. Օծությանը՝ Քրիստոսի ծննդյան և նոր տարվա լուսապայծառ ու բերկրալի տոների առթիվ:

Թո՛ղ Տեր Աստվածն ամբողջ աշխարհին պարգևի խաղաղ ու անվրդով նոր տարի:

МԵԼՔԻՍԵԴԵԿ
ՀԱՄԱՅՆ ՎՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐՔ

ԼՈՆԴՈՆԻՑ

Սիրեցյալ եղբա՛յր ի Քրիստոս,

Շնորհք և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ:

«Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան, և լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու» (Հովհ., Ա. 4—5): Այս բառերը, որոնցով սիրեցյալ առաքյալը արտահայտում է մեր աստվածային Տիրոջ մարդեղության խորհուրդը, այսօր հնչեցնում են վստահության և հույսի հաղթական մի կոչ, պայքարից մրագնած և ճշմարտության սևացումից շփոթված աշխարհում: Պրոպագանդայի շփոթեցուցիչ ձայները լսվում են ամենուրեք և մղում մարդկանց մտքերը՝ կորցնելու իրենց կապը ճշմարտության բոլոր վերջին չափանիշների հետ: Միշտ առկա են զորեղ ու չար ուժեր, որոնք նախընտրում են խավարը լույսից, և «ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութեան որ ի ներքոյ երկնից» (Եփես., Զ. 12):

Եղբայրական սիրո հատկապես խորը զգացմունքներով է, որ այս պարագաների մեջ ես շնորհավորում եմ Ձեզ, սիրեցյալ Եղբա՛յր, մեր աստվածային Փրկչի ծննդյան առթիվ, գիտենալով, որ մենք պետք է ուրեմն դառնանք դեպի մսուրը խոնարհ պաշտամունքի, գտնելու համար նորից, աստվածային Մանկան և իր Մոր դեմքերից ճառագայթող մի լույս, որը երբեք չի կարող հանգցըվել: Աստվածային այս լույսը կցուցադրի նրանց համար, ովքեր կտեսնեն այն, աշխարհի չարիքները ու թշնամանքները, մարմինն ու սատանան, և մարդկանց համար կլուսավորի երջանկության և սիրո ճշմարիտ ուղին:

Ուրախ եմ Աստվածորդու հնազանդության մեջ մեր միությամբ: Աղոթում եմ Աստծուն՝ անեցնելու այդ միությունը Քրիստոսով, և օրհնելու Ձեզ և Ձեր Եկեղեցին, լցնելով Ձեզ կատարյալ ուրախությամբ և խաղաղությամբ ի Տեր:

Մնամ Ձեր անկեղծ և սիրող եղբայր ի Քրիստոս՝

ՋԵՈՖՐԻ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ,
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՎ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՀԱՄԱՅՆ ԱՆԳԼԻՈ

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Խնդրում եմ Ձեզ ընդունել իմ ամենասրտագին շնորհավորանքները՝ մեր Փրկչի Ծննդյան մեծ տոնի առթիվ։ Ձերդ Սրբությանը ողջունում եմ նույնպես վերահաս նոր տարվա առթիվ։

Ջերմագին մաղթում եմ Ձերդ Սրբությանը արևշատություն և «Շնորհք, ողորմութիւն և խաղաղութիւն ի Հօրէ և ի Քրիստոսէ Տեառնէ մերմէ» (Բ Տիմոթ., Ա 2)։

Ձերդ որդիական սիրով՝

**ՆԻԿՈԼԱՅ**
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ԿՐՈՒՏԻՑԿՈՒ ԵՎ ԿՈԼՈՄԵՆԱՅԻ

---

ՌԻԳԱՅԻՑ

Լատվիական Ավետարանական-Լութերական Եկեղեցու Սուրբ Սինոդի անունից խնդրում եմ ընդունեք և հաղորդեք Ձեր սպասավորներին՝ Ծննդեան և նոր տարվա առթիվ մեր սրտագին ողջույնը և բարի աղոթքները։ Ցանկանում ենք Ձերդ Սրբությանը առողջություն և հետագա առաջադիմություն հօգուտ Հայոց հնադարյան Եկեղեցու, հօգուտ քրիստոնյաների միասնության, հօգուտ ամբողջ աշխարհի խաղաղության պաշտպանության։

Ձերդ Սրբության մերձբալթյան կրտսեր եղբայրակիցն ի Քրիստոս՝ Ձեզ շնորհակալություն է հայտնում Լատվիական Եկեղեցու և նրա ներկայացուցիչներին Ձեր կողմից բազմիցս ցույց տրված ուշադրության համար։ Մենք բոլորս ցանկանում ենք Ձեզ երկար տարիներ, ուրախ և կայտառ կյանք։

**ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՈՒՍՏԱՎ ՏՈՒՐՍ**

---

ՄՈՍԿՎԱՅԻՑ

Ողջունում եմ Ձերդ Վեհափառությանը՝ Ծննդյան տոնի և վերահաս նոր տարվա առթիվ։

**ԵՊԻՍԿՈՊՈՍ ՖԼԱՎԻԱՆ**
ՀԻՆԾԻՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՏ

---

ՏԱԼԼԻՆԻՑ

Անկեղծ շնորհակալություն հայտնելով Ձեր եղբայրական ցանկությունների համար, ամբողջ հոգով շնորհավորում ենք Ձեզ և հանձին Ձեր՝ Ձեր սպասավորներին և Համայն Հայոց Եկեղեցին՝ Քրիստոսի լուսապայծառ Ծննդյան տոնի և նոր տարվա առթիվ։ Թո՛ղ 1953 թվականը խաղաղություն և երջանկություն բերի անձամբ Ձեզ, մեր եղբայրական եկեղեցիներին և Սովետական Միության ժողովուրդներին։

**ՅԱՆ-ԿԻՅՎԻՏ**
ԷՍՏՈՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՈՒԹԵՐԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ